

ՎԻՃԱԿԱՆԱՂ՝ ՄԵԾԱՅԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Ալեքսանդր Ռոզով

Որքան էլ տարօրինակ է, սակայն խոսքն ընտրությունների մասին է լինելու: Հենց այն ընտրությունների, որոնք ընդունված է ժողովրդավարության հիմքը համարել: Հենց այն արարողության՝ որն իրականացնում են քաղաքացիները, երբ սկզբում լուր է (դիտում են, ընթերցում են) թեկնածուների ելույթները, եւ ապա դրանցից ոմանց ընտրում որեւէ պաշտոնի (պատգամավոր, քաղապետ, նախագահ եւ այլն), «ծիտիկ» դնելով նրա անվան դիմաց՝ հատուկ թղթի վրա: Հիշեցնենք. ընտրված է համարվում այն թեկնածուն, ում ավելի շատ ծիտիկ է հասել:

Բազմակողմանիորեն ուսումնասիրելով այդ ընթացակարգը մաթեմատիկական տնտեսագիտության տեսանկյունից, կարելի է պարզել հետեւյալը.

1. Սա բավական թանկ ընթացակարգ է: Յուրաքանչյուրը կարող է ծանոթանալ ընտրությունների պաշտոնական բյուջեին եւ այդ գումարի՝ մեծահասակ քաղաքացիների թվին բաժանելու պարզ գործողության միջոցով իմանալ, թե որքան է անձամբ ի՞ր վրա նստել, օրինակ, քաղաքապետի ընտրությունը:

2. Ընթացակարգն այս չի ապահովում որակյալ ընտրություն: Լավագույն դեպքում ընտրվելու է միջակ ընդունակություններով մարդ, այն էլ՝ ոչ շատ ազնիվ: Բավական հավանական է վատագույն դեպքը, այսինքն, երբ կընտրվի անտաղանդ, գող եւ գարշելի մի որեւէ տիպ: Կառավարման արդյունքները, որպես կանոն, չեն ուրախացնելու:

Պարզ է, որ, արտահայտվելով «գին-որակ» եզրերով, վճարել նման փողեր (տե՛ս կետ 1.) նման արդյունքով ընթացակարգի համար (տե՛ս կետ 2.) նպատակահարմար չէ:

Առաջարկում ենք ընտրությունների այլ ընթացակարգ, որը.

1. Տնտեսապես ավելի ձեռնտու է (ի տարբերություն սովորական ընտրությունների, որոնք ծախսատար են, այս ընթացակարգը բավական շահութաբեր է):

2. Միջին հաշվով ապահովվում է ընտրության՝ սովորական տարբերակից ոչ ցածր որակ:

Ավելին, առաջարկվող ընթացակարգը ժողովրդավարական է (այսինքն, բոլոր ցանկացողների համար ապահովվում են առաջադրվելու եւ ընտրվելու հավասար հնարավորություններ):

Առաջարկվող տարբերակը ոչ այլ ինչ է, քան վիճակախաղ՝ լոտո, որն անցկացվում է հետեւյալ սկզբունքներով:

1. Հրատարակվում են վիճակախաղի տոմսեր (ֆինանսավորումը՝ այդ տոմսերի վրա գովազդ տեղադրելու իրավունքը վաճառելու հաշվին): Խաղարկվող առարկան ընտրովի պաշտոնն է: Տոմսի գինը պիտի լինի խելամիտ (օրինակ՝ 20-ական դոլար): Գնման ժամանակ տոմսի մեջ ներգրվում են անձնագրային տվյալները:

2. Յուրաքանչյուրը, որ ցանկանում է ընտրվել, կարող է գնել մեկ կամ մի քանի տոմս: Նկատենք. նրանք, ովքեր կզեն մի քանի տոմս, ավելի շատ հնարավորություն կունենան շահելու, սակայն սովորական ընթացակարգի դեպքում նույնպես ավելի մեծ է նրա՝ հնարավորությունը, ով ավելի շատ փող կներդնի նախընտրական արշավի ընթացքում:

3. Անցակցվում է հրապարակային խաղարկություն (ֆինանսավորումը՝ այդ խաղարկության հեռարձակման ընթացում գովազդային հոլովակներ տեղադրելու իրավունքը վաճառելու հաշվին): Նա, ում համարը շահել է, ներկայացնում է իր տոմսը եւ անմիջապես զբաղեցնում խաղարկվող պաշտոնը:

Ահա եւ ամենը:

Ինչպիսի՞ առարկություններ կարող են լինել:

Առարկություն 1. Իշխանության կարող են հասնել պատահական մարդիկ:

Պատասխան. Առանց այն էլ իշխանության հասնում են պատահական մարդիկ: Եւ ավելի վատերը, քան պարզապես պատահական: Համոզվելու համար բավական է նայել ցանկացած մակարդակի վերջին ընտրությունների արդյունքներին:

Առարկություն 2. Նման իշխանությունը քաղաքացիների շրջանում հեղինակություն չի ունենա:

Պատասխան. Փորձը վկայում է, որ իշխանության հեղինակությունը ամենեւին էլ ընտրությունների ընթացակարգով չի որոշվում:

Առարկություն 3. Չի կարելի քաղաքացիներին զրկել գիտակցական ընտրություն կատարելու հնարավորությունից:

Պատասխան. Ընտրական տեխնոլոգիաները վաղուց արդեն զրկել են քաղաքացիներին այդ հնարավորությունից:

Առարկություն 4. Իշխանության կարող է հասնել վերնախավի մեջ չմտնող, այսինքն, կառավարման հմտություններ եւ հատուկ գիտելիքներ չունեցող մարդ:

Պատասխան. Ժողովրդավարությունը դա էլ հենց նշանակում է, որ ընտրովի պաշտոնը չի պահանջում հատուկ գիտելիքների եւ հմտությունների իմացություն: Յենց այդ պատճառով էլ յուրաքանչյուր քաղաքացի (եւ ոչ թե միայն որոշակի մասնագիտության կամ խավի ներկայացուցիչ) ունի առաջադրվելու իրավունք: Եթե այդ սկզբնադրույթը ճիշտ չէ, ապա ժողովրդավարություն չպիտի լինի: Ինչ վերաբերում է կառավարչական գիտելիքներին ու հմտություններին, ապա դրանց գոյությունը լուրջ կասկածներ է հարուցում:

Առարկություն 5. Մարդը, որն ընտրվել է այդ ձեւով չի կարողանա համարժեքորեն ներկայացնել այն մարզը, որից նա ընտրված է:

Պատասխան. Եթե մենք ելնում ենք ընտրություններում մասնակցելու յուրաքանչյուր մարդու իրավունքից, ապա բնականաբար պիտի ընդունենք, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի այնքան առողջ բանականություն, որպեսզի պատկերացնի, թե ինչ է պետք այս կամ այն մարզին: Եթե դա այդպես չէ, ապա պետք է հրաժարվել համընդհանուր ընտրական իրավունքից:

Առարկություն 6. Անհնար կլինի երկրորդ ժամկետով ընտրել այն մարդուն, որն իրեն լավ է դրսևորել:

Պատասխան. Ցավալի է իհարկե: Բայց փոխարենը, մարդը, որն իրեն վատ է դրսևորել չի կարողանա ապահովել իր վերաընտրությունը՝ «վարչական պաշարի» հաշվին:

Այժմ առաջարկվող ընտրական եղանակի լրացուցիչ (այսինքն, ոչ միայն տնտեսական, այլև՝ բովանդակային) առավելությունների մասին:

Առաջինը. այս դեպքում կա իրական տարբերակ, որ իշխանության կզա որակյալ եւ կարգին մարդ որեւէ այլ խավից (ոչ վերնախավից, այսինքն, դրա արատների համալիրով չվարակված մարդ): Գործող համարկարգի դեպքում նման մարդը ոչ մի նման հնար չունի:

Երկրորդը. ընտրված մարդը բոլոր դեպքերում ոչ մեկին (ճակատագրից բացի) պարտական չի լինի իր ընտրության համար: Դա տեղն ու տեղը կվերացնի հիմքը կաշառակիրության եւ հովանավորչականության մի զգալի զանգվածի համար (ճակատագիրը ոչ մեկի համար արտոնություններ չի խնդրում):

Երրորդը. այս դեպքում, զուտ հոգեբանական պատճառներով կնվազի վարչական կամայականությունների մակարդակը: Փողոցից եկած մարդը, որն ապօրինաբար տուժել է որեւէ պաշտոնյաից, հաջորդ ընտրությունների ժամանակ կարող է, օրինակ, նախագահ դառնալ: Յետեւանքներն այդ պաշտոնյայի համար պարզ են:

Եւ վերջինը: Կրկին, զուտ հոգեբանական պատճառներով, քաղաքացիների կողմից իշխանությունն ավելի իրականորեն կսկսի ընկալվել. որպես ինչ-որ մարդկային բան: Իշխանություններից այլեւս չեն պահանջի գերբնական հրաշքեր: Չեն հանդուրժի իշխանությունների գերբնական այլանդակությունները: Միայն դա բավական է, որ հասարակության կառուցվածքը գունե միքիչ ավելի խելամիտ դառնա: